

|  |   |
|--|---|
| <p>Կարմիր գույնի առկայծող փարոսիկ միացրած, կանգնած վիճակում գտնվող տրանսպորտային միջոցին մոտենալիս՝ տվյալ ուղղությամբ երթեւեկող ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վարորդները պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Կանգ առնեն եւ շարունակեն երթեւեկությունը միայն թույլտվություն ստանալուց հետո:</li> <li>2. Իջեցնեն արագությունը, որպէսզի անհրաժեշտության դեպքում հնարավորություն ունենան անմիջապէս կանգ առնել:</li> <li>3. Շարունակեն երթեւեկությունը, քանի որ երթեւեկում են սահմանված երթուղով:</li> </ol> <p style="text-align: right;">Պատ.՝1</p> | <p>Կապույտ գույնի առկայծող փարոսիկ եւ հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոց մոտենալու դեպքում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վարորդները պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Շարունակեն երթեւեկությունը, քանի որ երթեւեկում են սահմանված երթուղով:</li> <li>2. Չիջեն ճանապարհը՝ նշված տրանսպորտային միջոցի անխոչընդոտ անցումն ապահովելու համար:</li> <li>3. Իջեցնեն արագությունը եւ զիջեն ճանապարհը՝ նշված տրանսպորտային միջոցի անխոչընդոտ անցումն ապահովելու համար:</li> </ol> <p style="text-align: right;">Պատ.՝2</p> |
|--|---|

|   |   |
|---|---|
| <p>Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ձայնային ազդանշանները կարող են կիրառվել՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Երթեւեկության մյուս մասնակիցների նկատմամբ առավելություն ստանալու համար:</li> <li>2. Բնակավայրերում՝ վազանց կատարելու մտադրության մասին մյուս վարորդներին նախազգուշացնելու համար:</li> <li>3. Երբ դա անհրաժեշտ է ճանապարհատրանսպորտային պատահարը կանխելու համար:</li> <li>4. Բոլոր դեպքերում էլ:</li> </ol> <p style="text-align: right;">Պատ.՝3</p> | <p>Օրվա մուգ ժամանակ ճանապարհի չլուսավորված հատվածներում սահմանված երթուղով երթեւեկող ավտոբուսի վրա պետք է միացված լինի՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Լապտերների միայն մոտակա լույսը:</li> <li>2. Լապտերների միայն հեռահար լույսը:</li> <li>3. Լապտերների հեռահար կամ մոտակա լույսը:</li> </ol> <p style="text-align: right;">Պատ.՝3</p> |
|---|---|

|  |   |
|--|---|
| <p>Պարտադիր է արդյոք օրվա լուսավոր ժամերին լապտերների մոտակա լույսը միացված լինի հատուկ առանձնացված գոտիով, հիմնական հոսքին հանդիպակաց երթեւեկող ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա:</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Պարտադիր է:</li> <li>2. Պարտադիր չէ:</li> </ol> <p style="text-align: right;">Պատ.՝1</p> | <p>Ո՞ր դեպքում կանոնները չեն պարտադրում տալ նախազգուշացնող ազդանշան:</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Երթեւեկելի մասի եզրին կանգառ կատարելիս:</li> <li>2. «Կտանգավոր շրջադարձ» նշանի ազդեցության ճանապարհի կորացումից առաջ:</li> <li>3. Երթեւեկության հարեւան գոտի վերադասավորվելուց առաջ:</li> </ol> <p style="text-align: right;">Պատ.՝2</p> |
|--|---|

|  |   |
|--|---|
| <p>Վերադասավորումից առաջ նախազգուշացնող ազդանշանը պետք է տրվի՝</p> <p>1.Անմիջապես մանեւրն սկսելուց առաջ:<br/>2.Անմիջապես մանեւրն սկսելուց հետո:<br/>3.Նախօրոք՝ մինչեւ մանեւրն սկսելը:</p> <p style="text-align: right;">Պատ.՝3</p> | <p>Մանեւրը կատարելուց առաջ նախազգուշացնող ազդանշանը պետք է տրվի՝</p> <p>1.Մանեւրն սկսելուց անմիջապես առաջ:<br/>2.Մանեւրն սկսելու հետ միաժամանակ:<br/>3.Նախօրոք՝ մինչեւ մանեւրն սկսելը:</p> <p style="text-align: right;">Պատ.՝3</p> |
|--|---|

|   |  |
|---|--|
| <p>Վարորդի կողմից ձեռքով տրվող նախազգուշացնող ազդանշանը դադարեցվում է՝</p> <p>1.Մանեւրն սկսելուց անմիջապես առաջ:<br/>2.Մանեւրն ավարտելուց անմիջապես հետո:<br/>3.Մանեւրը կատարելու ժամանակ:</p> <p style="text-align: right;">Պատ.՝1</p> | <p>Ո՞ր դեպքում վարորդը պետք է տա նախազգուշացնող ազդանշան՝ կանգառ կատարելուց առաջ:</p> <p>1.Եթե նրա հետեւից երթեւեկում է այլ տրանսպորտային միջոց:<br/>2.Միայն բնակավայրերում:<br/>3.Բոլոր դեպքերում:</p> <p style="text-align: right;">Պատ.՝3</p> |
|---|--|


|  |  |
|--|--|
| <p>Ձայնային ազդանշանների կրկնողությամբ ընդհանուր տագնապի ինչպիսի՞ ազդանշան է վարորդը պարտավոր տալ երկաթուղային գծանցի վրա հարկադրական կանգառ կատարելու դեպքում:</p> <p>1.Երեք երկար եւ մեկ կարճ:<br/>2.Մեկ երկար եւ երեք կարճ:<br/>3.Մեկ երկար եւ երկու կարճ:</p> <p style="text-align: right;">Պատ.՝2</p> | <p>Շրջադարձի լուսային ցուցիչի բացակայության կամ անսարքության դեպքում ձեռքով տրվող նախազգուշացնող ազդանշանը դադարեցվում է՝</p> <p>1.Մանեւրն սկսելուց անմիջապես առաջ:<br/>2.Մանեւրն ավարտելուց անմիջապես հետո:<br/>3.Մանեւրը կատարելու ժամանակ:</p> <p style="text-align: right;">Պատ.՝1</p> |
|--|--|

Երկաթուղային գծանցի վրա տրվող ընդհանուր տազնապի ազդանշան է հանդիսանում ձայնային ազդանշանների հետեյալ համակցությունը՝

- 1.Երկու երկար եւ երկու կարճ:
- 2.Մեկ երկար եւ երեք կարճ:
- 3.Երեք երկար եւ երեք կարճ:
- 4.Երեք երկար եւ մեկ կարճ:

Պատ.՝2

Ո՞ր նկարում է վարորդը տալիս ձախ շրջադարձի ազդանշան:



- 1.1
- 2.2
- 3.3

Պատ.՝1

Կարմիր գույնի առկայծող փարոսիկ միացրած, կանգնած վիճակում գտնվող տրանսպորտային միջոցին մոտենալիս՝ տվյալ ուղղությամբ երթեւեկող տրանսպորտային միջոցների վարորդները պետք է՝

- 1.Կանգ առնեն եւ շարունակեն երթեւեկությունը միայն թույլտվություն ստանալուց հետո:
- 2.Իջեցնեն արագությունը, որպեսզի անհրաժեշտության դեպքում հնարավորություն ունենան անմիջապես կանգ առնել:

Պատ.՝1

Տրանսպորտային միջոցների վրա ի՞նչ նպատակով են տեղադրված նարնջագույն կամ դեղին գույնի առկայծող փարոսիկներ:

- 1.Երթեւեկության մյուս մասնակիցների նկատմամբ երթեւեկության առավելություն ստանալու համար:
- 2.Երթեւեկության մյուս մասնակիցներին վտանգի մասին նախազուշացնելու համար:


Պատ.՝2

Կապույտ գույնի առկայծող փարոսիկ եւ հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոց մոտենալու դեպքում՝ վարորդները պետք է՝

- 1.Չիջեն ճանապարհը՝ նշված տրանսպորտային միջոցի անխոչընդոտ անցումն ապահովելու համար:
- 2.Իջեցնեն արագությունը եւ զիջեն ճանապարհը՝ նշված տրանսպորտային միջոցի անխոչընդոտ անցումն ապահովելու համար:

Պատ.՝1

Կապույտ ավտոմոբիլը խաչմերուկը կանցնի՝



- 1.Առաջինը՝ կարմիրի հետ միաժամանակ:
- 2.Երկրորդը՝ կարմիրի հետ միաժամանակ:
- 3.Երրորդը՝ կարմիրի հետ միաժամանակ:

Պատ.՝3

Կապույտ եւ կարմիր գույների առկայծող փարոսիկներ եւ հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոց մոտենալու դեպքում վարորդները պետք է՝

1. Չիջեն ճանապարհը՝ նշված տրանսպորտային միջոցի անխոչընդոտ անցումն ապահովելու համար:
2. Իջեցնեն արագությունը եւ զիջեն ճանապարհը՝ նշված, ինչպես նաեւ դրանով ուղեկցվող տրանսպորտային միջոցների անխոչընդոտ անցումն ապահովելու համար:

Պատ.՝2

Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդն ունի առաջնահերթ երթելու կոչում:



1. Ճանապարհային մեքենայի վարորդը:
2. Թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդը:

Պատ.՝2

Սեւ ավտոմոբիլը խաչմերուկը կանցնի՝



1. Առաջինը:
2. Երկրորդը:
3. Վերջինը:

Պատ.՝2


Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդը պետք է զիջի ճանապարհը:



1. Շտապ օգնության ավտոմոբիլի վարորդը:
2. Թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդը:

Պատ.՝2

Կապույտ ավտոմոբիլը խաչմերուկը կանցնի՝



1. Առաջինը:
2. Երկրորդը:
3. Երրորդը:
4. Վերջինը:

Պատ.՝4

Տալիս է արդյոք երթելու կոչումն առաջնություն տրանսպորտային միջոցի վրա միացված դեղին գույնի (սարնշագույն) առկայծող փարոսիկը:

1. Տալիս է:
2. Չի տալիս:

Պատ.՝2

Լուսնասպիտակ գույնի առկայծող փարոսիկները միացրած տրանսպորտային միջոցի վարորդը տալիս է հատուկ ձայնային ազդանշան, որպեսզի՝

1.Ստանա երթեւեկության առավելություն երթեւեկության այլ մասնակիցների նկատմամբ:  
 2.Ոստիկանության ծառայողների եւ այլ անձանց ուշադրությունը գրավելու համար:

Պատ.՝2

Կապույտ գույնի առկայծող փարոսիկով կահավորված տրանսպորտային միջոցի վարորդը երթեւեկության մյուս մասնակիցների նկատմամբ առավելություն ունի, եթե՝

1.Միացրել է առկայծող փարոսիկը:  
 2.Հատուկ ձայնային ազդանշան է տալիս:  
 3.Միացրել է կապույտ գույնի առկայծող փարոսիկը եւ հատուկ ձայնային ազդանշանը:

Պատ.՝3

Ի՞նչ տարածության վրա է արգելվում վազանքը մինչեւ երկաթուղային գծանցը:

1.Մինչեւ 50 մ առաջ:  
 2.Մինչեւ 100 մ առաջ:  
 3.Մինչեւ 150 մ առաջ:

Պատ.՝2

Թույլատրվում է արդյոք խաչմերուկում կատարել տրանսպորտային միջոցների վազանք՝ հատվողի նկատմամբ գլխավոր համարվող ճանապարհի վրա:

1.Թույլատրվում է:  
 2.Արգելվում է:

Պատ.՝2

Թույլատրվում է արդյոք թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդին վազանք կատարել նշված իրադրությունում:



1.Թույլատրվում է:  
 2.Թույլատրվում է, եթե մոտոցիկլի արագությունը չի գերազանցում 30 կմ/ժ:  
 3.Արգելվում է:

Պատ.՝3

Վազանքն արգելվում է՝

1.խաչմերուկներում:  
 2.Երկաթուղային գծանցներից 150 մ առաջ:  
 3.Երկու դեպքում էլ:


Պատ.՝1

Վազանցն արգելվում է՝

1. Կարգավորվող խաչմերուկներում:
2. Չկարգավորվող խաչմերուկներում:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝3

Թույլատրվում է արդյոք վազանցել ավտոգնացքը տվյալ իրադրությունում, եթե դրա արագությունը չի գերազանցում 30 կմ/ժ:



1. Արգելվում է:
2. Թույլատրվում է:

Պատ.՝1


Թույլատրվում է արդյոք կանաչ ավտոմոբիլի վարորդին վազանց կատարել:



1. Թույլատրվում է:
2. Արգելվում է:
3. Թույլատրվում է, եթե կարմիր ավտոմոբիլը երթելեկում է 30 կմ/ժ ավելի փոքր արագությամբ:

Պատ.՝2


Թույլատրվում է արդյոք կարմիր ավտոմոբիլի վարորդին վազանց կատարել տվյալ իրադրությունում:



1. Թույլատրվում է:
2. Արգելվում է:
3. Թույլատրվում է, եթե վազանցվող ավտոմոբիլի արագությունը չի գերազանցում 30 կմ/ժ:

Պատ.՝2

Թույլատրվում է արդյոք նշված տեղում վազանցել ավտոբուսը:



1. Թույլատրվում է:
2. Արգելվում է:

Պատ.՝1

Տրանսպորտային միջոցների վազանց նշանակում է՝

1. Շարժման մեջ գտնվող մեկ կամ մի քանի տրանսպորտային միջոցից առաջ անցնելը՝ կապված զբաղեցրած գոտուց հանդիպակաց երթելեկության գոտի դուրս գալու հետ:
2. Շարժման մեջ գտնվող մեկ կամ մի քանի տրանսպորտային միջոցից առաջ անցնելը՝ կապված զբաղեցրած գոտուց դուրս գալու հետ:

Պատ.՝2

|  |   |
|--|---|
| <p>Օրվա մուլթ ժամանակ եւ անբավարար տեսանելիության պայմաններում՝ անկախ ճանապարհի լուսավորվածությունից, երթեւեկող մեխանիկական տրանսպորտային միջոցների վրա պետք է միացված լինեն՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Լապտերների հեռահար լույսը:</li> <li>2. Լապտերների մոտակա լույսը:</li> <li>3. Լապտերների հեռահար կամ մոտակա լույսը:</li> </ol> <p style="text-align: right;">Պատ.՝3</p> | <p>Ո՞ր դեպքում օրվա լուսավոր ժամանակ մոտոցիկլի վրա պետք է միացված լինի լապտերների մոտակա լույսը:</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Անբավարար տեսանելիության պայմաններում երթեւեկելիս:</li> <li>2. Դեպի կայանման վայր շարժվող, անսարքություններ ունեցող մոտոցիկլով երթեւեկելիս:</li> <li>3. Ցանկացած դեպքում՝ երթեւեկության մեջ գտնվելիս:</li> <li>4. Հիվանդ ուղեւոր փոխադրելիս:</li> </ol> <p style="text-align: right;">Պատ.՝3</p> |
|--|---|

|   |   |
|---|---|
| <p>Առաջնահերթ ի՞նչ պետք է ձեռնարկի վարորդը հանդիպակաց երթեւեկող տրանսպորտային միջոցի լապտերների լույսից շանայլու դեպքում:</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Լապտերների հեռահար լույսը (միացված լինելու դեպքում) փոխարկի մոտակայի:</li> <li>2. Միացնի վթարային լուսային ազդանշանը:</li> <li>3. Տա ձայնային ազդանշան՝ մեկ երկար եւ երեք կարճ:</li> <li>4. Տա ձայնային ազդանշան՝ մեկ կարճ եւ երեք երկար:</li> </ol> <p style="text-align: right;">Պատ.՝2</p> | <p>Ձայնային ազդանշանները կարող են կիրառվել միայն՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Բնակավայրերում՝ վազանց կատարելու մտադրության մասին մյուս վարորդներին նախազգուշացնելու համար:</li> <li>2. Երբ դա անհրաժեշտ է ճանապարհատրանսպորտային պատահարը կանխելու համար:</li> <li>3. Երկու դեպքում էլ:</li> </ol> <p style="text-align: right;">Պատ.՝2</p> |
|---|---|

|  |  |
|--|--|
| <p>Օրվա մուլթ ժամանակ ճանապարհի չլուսավորված հատվածներում երթեւեկող մեխանիկական տրանսպորտային միջոցի վրա պետք է միացված լինի՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Լապտերների հեռահար կամ մոտակա լույսը:</li> <li>2. Լապտերների միայն մոտակա լույսը:</li> <li>3. Լապտերների միայն հեռահար լույսը:</li> </ol> <p style="text-align: right;">Պատ.՝1</p> | <p>Հետին հակամառախուղային լապտերիկները կարող են օգտագործվել՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Օրվա մուլթ ժամանակ՝ տրանսպորտային շարայան կազմում երթեւեկելիս:</li> <li>2. Թունելներում երթեւեկելիս:</li> <li>3. Միայն անբավարար տեսանելիության պայմաններում:</li> <li>4. Օրվա մուլթ ժամանակ՝ տրանսպորտային միջոցը բեռնաթափելիս:</li> <li>5. Թվարկած բոլոր դեպքերում:</li> </ol> <p style="text-align: right;">Պատ.՝3</p> |
|--|--|

Հանդիպակաց երթևեկող տրանսպորտային միջոցից ի՞նչ հեռավորության վրա լապտերների հեռահար լույսը պետք է փոխարկվի մոտակայի:

1. 100 մ-ից ոչ պակաս:  
 2. 150 մ-ից ոչ պակաս:  
 3. 300 մ-ից ոչ պակաս:

Պատ.՝2

Լապտեր-լուսարձակ թույլատրվում է օգտագործել՝

1. Միայն բնակավայրերից դուրս՝ հանդիպակաց եւ համընթաց տրանսպորտային միջոցների բացակայության դեպքում:
2. Միայն անբավարար տեսանելիության պայմաններում:
3. Ցանկացած տեղում, եթե դրա անհրաժեշտությունը կա:
4. Օրվա մութ ժամանակ՝ ճանապարհների բոլոր հատվածներում:

Պատ.՝1

Այս նախազգուշացնող նշանը բնակավայրերում, մինչև վտանգավոր հատվածի սկիզբը ի՞նչ հեռավորության վրա է տեղադրվում:



1. 25 - 50 մ:  
 2. 50 - 100 մ:  
 3. 100 - 150 մ:

Պատ.՝2

Թույլատրվում է արդյոք երկաթուղային գծանցով փոխադրել գյուղատնտեսական, ճանապարհային, շինարարական եւ այլ մեքենաներ ու մեխանիզմներ:

1. Թույլատրվում է, եթե գծանցը կահավորված չէ ուղեփակոցով:
2. Թույլատրվում է, եթե դրանք գտնվում են ոչ տրանսպորտային վիճակում:
3. Թույլատրվում է, եթե դրանք գտնվում են տրանսպորտային վիճակում:

Պատ.՝3

Որտե՞ր է թույլատրվում հատել երկաթուղային գծերը:

1. Այն տեղերում, որտեղ երկու կողմից տեսանելիությունը կազմում է առնվազն 1000 մ:
2. Վարորդի հայեցողությամբ՝ դրա համար առավել հարմարավետ տեղերում:
3. Դրա համար նախատեսված տեղերում:
4. Երկաթուղային կայարաններից առնվազն 1000 մ հեռավորության վրա:

Պատ.՝3

Թույլատրվում է արդյոք ծառայողական առաջադրանք կատարելիս ինքնակամ բացել կամ շրջանցել ուղեփակոցը:

1. Արգելվում է:
2. Թույլատրվում է:
3. Թույլատրվում է՝ վարորդի հայեցողությամբ, եթե մոտակայքում բացակայում է մոտեցող գնացքը:
4. Թույլատրվում է՝ գծանցի հերթապահի բացակայության դեպքում:

Պատ.՝1



|  |   |
|--|---|
| <p>Թույլատրվում է արդյոք երկաթուղային գծանցով փոխադրել գյուղատնտեսական, ճանապարհային, շինարարական եւ այլ մեքենաներ ու մեխանիզմներ:</p> <p>1.Թույլատրվում է:<br/>2.Թույլատրվում է, եթե դրանք գտնվում են տրանսպորտային վիճակում:<br/>3.Արգելվում է:</p> <p style="text-align: right;">Պատ.՝2</p> | <p>Ինչո՞վ պետք է ղեկավարվի վարորդը երկաթուղային գծանցին մոտենալիս:</p> <p>1.Ուղեփակոցի դիրքով եւ լուսացույցի ազդանշաններով:<br/>2.Ճանապարհային նշանների եւ գծանշումների պահանջներով:<br/>3.Գծանցի հերթապահի ցուցումներով:<br/>4.Բոլոր թվարկած պահանջներով:</p> <p style="text-align: right;">Պատ.՝4</p> |
|--|---|

|   |   |
|---|---|
| <p>Թույլատրվում է արդյոք հետիոտներին տեղաշարժվել «Ավտոմայրուղի» նշանով կահավորված ճանապարհով:</p> <p>1.Արգելվում է:<br/>2.Թույլատրվում է՝ բնակավայրերից դուրս՝ տրանսպորտային միջոցների հոսքին հակառակ:<br/>3.Թույլատրվում է՝ բնակավայրերից դուրս՝ տրանսպորտային միջոցների հոսքին համընթաց:</p> <p style="text-align: right;">Պատ.՝1</p> | <p>Տրանսպորտային միջոցներով, որոնց արագությունը տեխնիկական բնութագրերից կամ վիճակից ելնելով չի գերազանցում 40 կմ/ժ, ավտոմայրուղիներով երթեւեկել՝</p> <p>1.Թույլատրվում է՝ միայն աջ եզրային գոտիով:<br/>2.Արգելվում է:<br/>3.Թույլատրվում է՝ «Նվազագույն արագության սահմանափակում» նշանի բացակայության դեպքում:</p> <p style="text-align: right;">Պատ.՝2</p> |
|---|---|


|  |   |
|--|---|
| <p>Տրանսպորտային միջոցի վրա վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի՝</p> <p>1.Ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում:<br/>2.Կանգառն արգելված տեղերում՝ հարկադրված կանգառի դեպքում:<br/>3.Երկու դեպքում էլ:</p> <p style="text-align: right;">Պատ.՝3</p> | <p>Տրանսպորտային միջոցի վրա վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի՝</p> <p>1.Ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում:<br/>2.Քարշակման դեպքում (քարշակվող մեխանիկական տրանսպորտային միջոցի վրա):<br/>3.Կանգառն արգելված տեղերում՝ հարկադրված կանգառի դեպքում:<br/>4.Թվարկած բոլոր դեպքերում:</p> <p style="text-align: right;">Պատ.՝4</p> |
|--|---|

|  |  |
|--|--|
| <p>Տրանսպորտային միջոցից ի՞նչ հեռավորության վրա է տեղադրվում «Վթարային կանգառ» նշանը:</p> <p>1.Բնակավայրերում՝ ոչ պակաս 15 մ վրա, բնակավայրերից դուրս՝ 30 մ:<br/> 2.Բնակավայրերում՝ ոչ պակաս 10 մ վրա, բնակավայրերից դուրս՝ 20 մ:<br/> 3.Բնակավայրերում՝ ոչ պակաս 5 մ վրա, բնակավայրերից դուրս՝ 10 մ:</p> <p style="text-align: right;">Պատ.՝1</p> | <p>Տրանսպորտային միջոցի վրա վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի՝</p> <p>1.Լապտերների լույսից վարորդի շլացման դեպքում:<br/> 2.Քարշակման դեպքում (քարշակվող մեխանիկական տրանսպորտային միջոցի վրա):<br/> 3.Երկու դեպքում էլ:</p> <p style="text-align: right;">Պատ.՝3</p> |
|--|--|

|   |  |
|---|--|
| <p>Տրանսպորտային միջոցի վրա վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի՝</p> <p>1.Ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում:<br/> 2.Քարշակման դեպքում (քարշակվող մեխանիկական տրանսպորտային միջոցի վրա):<br/> 3.Երկու դեպքում էլ:</p> <p style="text-align: right;">Պատ.՝3</p> | <p>Կառուցապատված տարածքներում, որտեղ մուտք ու ելքը կշված են «Բնակելի գոտի» եւ «Բնակելի գոտու վերջ» ճանապարհային նշաններով, չի արգելվում՝</p> <p>1.Յետիոտների տեղաշարժը ճանապարհի երթևեկելի մասով:<br/> 2.Տրանսպորտային միջոցների միջանցիկ երթևեկությունը:<br/> 3.Ուսումնական վարումը:</p> <p style="text-align: right;">Պատ.՝1</p> |
|---|--|

|  |   |
|--|---|
| <p>Խաչմերուկը համարվում է կարգավորվող, եթե երթևեկության հերթականությունը որոշվում է՝</p> <p>1.Միայն լուսացույցի ազդանշաններով:<br/> 2.Միայն կարգավորողի ազդանշաններով:<br/> 3.Երկու դեպքում էլ:</p> <p style="text-align: right;">Պատ.՝3</p> | <p>Առանց ծածկույթի հողային ճանապարհի վրա, անմիջապես խաչմերուկից առաջ, ծածկույթով հատվածի առկայությունն արդյոք այդ ճանապարհը դարձնու՞մ է հատվողին հավասարազոր:</p> <p>1.Ոչ:<br/> 2.Այո:</p> <p style="text-align: right;">Պատ.՝1</p> |
|--|---|

Ո՞ր նկարում են պատկերված երթևեկության թույլատրելի ուղղությունները:



- 1.Ձախ նկարում:
- 2.Մեջտեղի նկարում:
- 3.Աջ նկարում:
- 4.Մեջտեղի եւ աջ նկարներում:

Պատ.՝3

Եթե լուսացույցի ազդանշանների նշանակությունները հակասում են առավելության նշանների պահանջներին, ապա վարորդները պետք է ղեկավարվեն՝

- 1.Նշանների պահանջներով:
- 2.Լուսացույցի ազդանշաններով:

Պատ.՝2

Թույլատրվում է արդյոք վարորդին շարունակել երթևեկությունը լուսացույցի դեղին ազդանշանը միանալու կամ կարգավորող ձեռքը բարձրացնելու դեպքում:

- 1.Արգելվում է:
- 2.Թույլատրվում է, եթե վարորդը հնարավորություն չունի կանգնել՝ առանց կտրուկ արգելակման:


Պատ.՝2

Կարգավորողն ազդանշան տալիս է սուլիչով՝

- 1.Միայն այն դեպքում, երբ պահանջում է կանգնեցնել տրանսպորտային միջոցը:
- 2.Երթևեկության մասնակիցների ուշադրությունն իր վրա հրավիրելու համար:

Պատ.՝2

Թույլատրվում է արդյոք տվյալ իրադրությունում ավտոգնացքին անցնել կամուրջի վրայով:



- 1.Թույլատրվում է:
- 2.Արգելվում է:

Պատ.՝2

Ո՞ր դեպքում կանոնները չեն պարտադրում ավտոբուսի վարորդին տալ նախազգուշացնող ազդանշան:

- 1.Երթևեկելի մասի եզրին կանգառ կատարելիս:
- 2.«Վտանգավոր շրջադարձ» նշանով նշված ճանապարհատվածի կորացումից առաջ:
- 3.Երթևեկության հարեան գոտի վերադասավորվելուց առաջ:
- 4.Սահմանված երթուղով երթևեկելիս:

Պատ.՝2

Վերադասավորումից առաջ ավտոբուսի վարորդը  
Նախագգուշացնող ազդանշան պետք է տա՝

- 1.Անմիջապես մանևերը սկսելուց առաջ:
- 2.Անմիջապես մանևերը սկսելուց հետո:
- 3.Նախօրոք՝ միևնչեւ մանևերը սկսելը:
- 4.Պարտավոր չէ, եթե ավտոբուսը երթեւեկում է սահմանված երթուղով:


Պատ.՝3

Ձայնային ազդանշանների կրկնողությամբ ընդհանուր տագնապի  
ինչպիսի՞ ազդանշան է ավտոբուսի վարորդը պարտավոր տալ  
երկայթուղային գծանցի վրա հարկադրական կանգառ  
կատարելու դեպքում:

- 1.Երեք երկար եւ մեկ կարճ:
- 2.Մեկ երկար եւ երեք կարճ:
- 3.Մեկ երկար եւ երկու կարճ:
- 4.Երկու երկար եւ երկու կարճ:

Պատ.՝2

Միջըաղաքային ավտոբուսի վարորդն իրավունք ունի՞  
վազանցելու մոտոցիկլին, որը երթեւեկում է 70 կմ/ժ  
արագությամբ:



- 1.Իրավունք չունի:
- 2.Իրավունք ունի:

Պատ.՝1

Կարելի՞ է Նշված հետագծով երթեւեկելու համար ձեռքով տալ  
Նախագգուշացնող ազդանշան:



- 1.Կարելի է, եթե անսարք է շրջադարձի ցուցիչը:
- 2.Կարելի, եթե անսարք է շրջադարձի ցուցիչը՝ օրվա լուսավոր ժամերին:
- 3.Կարելի է բոլոր դեպքերում:

Պատ.՝1

Պարտավոր է վարորդը միացնել շրջադարձի ցուցիչը՝ բնակելի  
գոտում երթեւեկությունը սկսելուց առաջ:

- 1.Պարտավոր չէ:
- 2.Պարտավոր է:
- 3.Պարտավոր է, այլ տրանսպորտային միջոցների առկայության դեպքում:

Պատ.՝2

Պարեկային ծառայության ավտոմոբիլի վարորդը երթեւեկության  
այլ մասնակիցների նկատմամբ առավելություն ստանալու համար  
պետք է միացնի՝

- 1.Կապույտ գույնի առկայծող փարոսիկը:
- 2.Կապույտ եւ կարմիր գույնի առկայծող փարոսիկները:
- 3.Կապույտ գույնի առկայծող փարոսիկը եւ հատուկ ձայնային ազդանշանը:

Պատ.՝3

Պարտավոր է ավտոբուսի վարորդը ճանապարհը զիջել «Շտապ օգնության» ավտոմոբիլին, եթե միացրած չեն կապույտ զույնի առկայծող փարոսիկը եւ հատուկ ձայնային ազդանշանը:



1. Պարտավոր է:
2. Պարտավոր չէ:

Պատ.՝2

Վազանցն արգելվում է՝

1. Երկաթուղային գծանցների վրա եւ մինչեւ 100մ դրանցից առաջ:
2. Երկաթուղային գծանցների վրա եւ մինչեւ 150մ դրանցից առաջ:
3. Երկաթուղային գծանցների վրա եւ մինչեւ 250մ դրանցից առաջ:

Պատ.՝1

Ինչի՞ մասին է տեղեկացնում թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդի կողմից ձեռքով տրված ազդանշանը:



1. Շրջադարձ է կատարում դեպի աջ:
2. Շարունակում է երթեւեկությունը ուղիղ:
3. Արգելակում է:

Պատ.՝3

Վթարային լուսային ազդանշանը միացվում է՝

1. Մինչեւ թունել մտնելը:
2. Ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում:
3. Կազմակերպված ավտոշարայան կազմում երթեւեկելիս:

Պատ.՝2

Ինչի՞ մասին է տեղեկացնում մոտոցիկլի վարորդի կողմից ձեռքով տրված ազդանշանը:



1. Շարունակում է երթեւեկությունը ձախ կամ հակառակ ուղղությամբ:
2. Շարունակում է երթեւեկությունը ուղիղ կամ աջ ուղղությամբ:

Պատ.՝1

Ինչի՞ մասին է տեղեկացնում թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդի կողմից ձեռքով տրված ազդանշանը:



1. Աջ շրջադարձ է կատարում:
2. Շարունակում է երթեւեկությունը ուղիղ:
3. Արգելակում է՝ ճանապարհը մոտոցիկլին զիջելու համար:

Պատ.՝1



Ինչի՞ մասին է տեղեկացնում թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդի կողմից ձեռքով տրված ազդանշանը:



1. Մտադիր է կատարել ձախ շրջադարձ կամ հետադարձ:
2. Արգելակում է՝ ճանապարհը բեռնատար ավտոմոբիլին գիջելու համար:

Պատ.՝1

Պարտավոր է արդյոք վարորդը միացնել շրջադարձի ցուցիչը տվյալ դեպքում:



1. Պարտավոր է:
2. Պարտավոր չէ:

Պատ.՝1

Օրվա լուսավոր ժամերին երեխաների կազմակերպված խմբեր տեղափոխելու ժամանակ պետք է միացված լինեն ավտոբուսի՝

1. Լապտերների հեռահար լույսերը:
2. Լապտերների մոտակա լույսերը:
3. Վթարային լուսային ազդանշանը:
4. Սրահի ներքին լուսավորության սարքերը:

Պատ.՝2


Թույլատրվում է բեռնատար ավտոմոբիլի վարորդին վազանցել ավտոբուսին, որը երթեւեկում է 60 կմ/ժ արագությամբ:



1. Արգելվում է:
2. Թույլատրվում է:

Պատ.՝2

Թույլատրվում է վազանց կատարել տվյալ իրավիճակում:



1. Արգելվում է:
2. Թույլատրվում է:
3. Թույլատրվում է, եթե ավտոբուսը երթեւեկում է 30 կմ/ժ պակաս արագությամբ:

Պատ.՝1

Թույլատրվում է արդյոք մուտք գործել երկաթուղային գծանց տվյալ իրավիճակում:



1. Թույլատրվում է:
2. Արգելվում է:

Պատ.՝2

Թույլատրվում է արդյոք մուտք գործել երկաթուղային գծանց տվյալ իրավիճակում:



- 1. Թույլատրվում է, եթե գնացք չի մոտենում:
- 2. Թույլատրվում է, եթե ուղեփակոցը բաց է:
- 3. Արգելվում է:

Պատ.՝3

Ինչպե՞ս պետք է գործել տվյալ իրադրությունում:



- 1. Գնացքի բացակայության դեպքում շրջանցել ուղեփակոցը եւ շարունակել երթեւեկությունը:
- 2. Կանգ առնել եւ սպասել ուղեփակոցի բացմանը:

Պատ.՝2

Տվյալ իրավիճակում թույլատրվում է անցնել երկաթուղային գծանցը:



- 1. Թույլատրվում է, եթե գնացք չի մոտենում:
- 2. Թույլատրվում է:
- 3. Արգելվում է:

Պատ.՝3

Տվյալ իրավիճակում թույլատրվում է անցնել երկաթուղային գծանցը:



- 1. Արգելվում է:
- 2. Թույլատրվում է, եթե մոտեցող գնացք չկա:
- 3. Թույլատրվում է, քանի որ գծանցի հերթապահն արգելում է հանդիպակաց տրանսպորտային միջոցի անցումը:

Պատ.՝1

Տվյալ իրավիճակում որտե՞ղ կարելի է սկսել վազանցը:



- 1. Երկաթուղային գծանցում:
- 2. Երկաթուղային գծանցն անցնելուց հետո:
- 3. Երկաթուղային գծանցից 100 մետր անցնելուց հետո:

Պատ.՝2

Տվյալ իրավիճակում թույլատրվում է վազանց կատարել:



- 1. Թույլատրվում է, քանի որ հանդիպակաց երթեւեկող տրանսպորտային միջոց չկա:
- 2. Արգելվում է:
- 3. Թույլատրվում է, եթե լծասայլը շարժվում է 30 կմ/ժ պակաս արագությամբ:

Պատ.՝2



Ի՞նչ մանևր է կատարում թեթև մարդատարի վարորդը



- 1. Կողանցում
- 2. Վազանց
- 3. Շրջանցում

Պատ.՝2

Թույլատրվում է արդյո՞ք վազանցել մոտոցիկլին



- 1. Թույլատրվում է
- 2. Արգելվում է

Պատ.՝2

Ո՞ր դեպքում է թույլատրվում հանդիպակաց երթևեկության գոտով վազանց կատարել յուրաքանչյուր ուղղությամբ մեկ գոտի ունեցող ճանապարհներին

- 1. Միայն, երբ հանդիպակաց ուղղությամբ գոտին բավարար տարածությամբ ազատ է:
- 2. Միայն երբ մեզ վազանց չեն կատարում:
- 3. Երկու պայմաններն էլ անհրաժեշտ է, որ ապահովված լինեն:

Պատ.՝3

Թույլատրվում է արդյո՞ք վազանց կատարել Եզված իրավիճակում:



- 1. Արգելվում է:
- 2. Թույլատրվում է, եթե մանևրը կավարտվի տեսանելիության սահմաններում:
- 3. Թույլատրվում է:

Պատ.՝3

Թույլատրվո՞ւմ է վազանցել բեռնատարին:



- 1. Այո
- 2. Այո, եթե վազանցը մինչև խաչմերուկ կավարտվի
- 3. Ոչ

Պատ.՝2

Ի՞նչ է պահանջվում վազանցվող տրանսպորտային միջոցի վարորդից

- 1. Նա պարտավոր է զիջել ճանապարհը վազանց կատարողին:
- 2. Նա որևէ կերպ չպետք է խոչընդոտի վազանցողին՝ բարձրացնելով արագությունը կամ կատարելով այլ գործողություն

Պատ.՝2



Թույլատրվո՞ւմ է այս իրավիճակում վազանց կատարել



1. Արգելվում է
2. Թույլատրվում է, եթե բեռնատարի արագությունը 30 կմ/ժ-ից պակաս է:
3. Թույլատրվում է

Պատ.՝1

Թույլատրվո՞ւմ է բեռնատարի վարորդին վազանցել տրակտորին, եթե թույլատրելի առավելագույն զանգվածը 3 տոննա է:



1. Այո
2. Այո, եթե տրակտորը 30 կմ/ժ-ից պակաս է ընթանում
3. Ոչ

Պատ.՝1

Եթե հանդիպակաց երթևեկությունը դժվար է այս իրավիճակում, ապա ճանապարհը պետք է զիջի



1. Բեռնատարի վարորդը
2. Թեթև մարդատարի վարորդը

Պատ.՝1

Հետիոտնային անցման վրա վազանց

1. Արգելվում է միայն հետիոտնի առկայության դեպքում:
2. Արգելվում է
3. Թույլատրվում է

Պատ.՝2

Ո՞ր հետագծով է թույլատրվում վազանց կատարել



1. Ցանկացած
2. Միայն Ա
3. Միայն Բ

Պատ.՝2

Ի՞նչ է ցույց տալիս ճանապարհային նշանը



1. 500 մետր հետո տապալված ծառ կա
2. 500 մետր հետո հանգստի վայր է:
3. 500 մետր հատվածում հանգստի վայր է:

Պատ.՝2

Վարորդը միացնել շրջադարձի լուսային ցուցիչն այս իրավիճակում



1. Պարտավոր է
2. Պարտավոր է, եթե հետևից մոտեցող վարորդ կա
3. Պարտավոր չէ

Պատ.՝3

Վարորդի դեպի վեր պարզած ձեռքով տեղեկացնում է



1. Ձախ շրջադարձ կատարելու մասին
2. Ուղիղ երթևեկելու մասին
3. Ընթացքը դանդաղեցնելու մասին

Պատ.՝3

Ազդանշան տալը երթևեկության մյուս մասնակիցների նկատմամբ առավելություն

1. Տալիս է
2. Չի տալիս
3. Տալիս է միայն շարժում սկսելիս

Պատ.՝2

Ի՞նչի մասին է տեղեկացնում մոտոցիկլի վարորդը



1. Ուղիղ երթևեկությունը շարունակելու
2. Ձախ շրջադարձ կատարելու
3. Թեթև մարդատարին զիջելու՝ նպատակով արագությունն իջեցնելու

Պատ.՝3

Ձախ շրջադարձ կատարելիս այս իրավիճակում ազդանշան տալը



1. Պարտադիր է
2. Պարտադիր չէ

Պատ.՝1

Վագանց կատարելիս ձախ շրջադարձի լուսային ցուցիչը անջատել պարտավոր ենք



1. Անմիջապես ձախ գոտի վերադասավորվելուց հետո
2. Միայն առջևից ընթացողից առաջ անցնելուց հետո
3. Վարորդի հայեցողությամբ

Պատ.՝1

Յետադարձն այս խաչմերուկում կատարելիս ո՞ր շրջադարձի ցուցիչը պետք է միացնենք



1. Աջ
2. Ձախ
3. Ոչ մեկը

Պատ.՝1

Պարտավոր եք արդյո՞ք նշված իրադրությունում տալ ազդանշան լուսային ցուցիչով



1. Այո
2. Ոչ
3. Այո, եթե աջ գոտով երթանկող վարորդ կա:

Պատ.՝1

Ի՞նչի մասին է տեղեկացնում մոտոցիկլի վարորդը



1. Ուղիղ երթանկությունը շարունակելու
2. Աջ շրջադարձ կատարելու
3. Ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելու

Պատ.՝3

Լուսային ցուցիչով տրված մանևրի մասին ազդանշանը պետք է դադարեցվի

1. Անմիջապես մանևրից առաջ
2. Անմիջապես մանևրից հետո
3. Մանևրի ընթացքում

Պատ.՝2

Լուսային ցուցիչով ազդանշան տալ նշված իրավիճակում



1. Պարտադիր է
2. Ըստ վարորդի հայեցողության

Պատ.՝1

Ո՞ր վարորդն է աջ շրջադարձի ազդանշան տալիս



1. Միայն աջում գտնվողը
2. Երկու վարորդներն էլ
3. Միայն ձախում գտնվողը

Պատ.՝2



Կայանատեղիներում կամ ավտոլցակայաններում մանևրելիս ազդանշան տալ լուսային ցուցիչով

- 1.Պարտավոր եք
- 2.Պարտավոր չեք

Պատ.՝1

Այս իրավիճակում ի՞նչ կարող է նշանակել վարորդի դուրս պարգած ձեռքը



- 1.Տեղեկություն նրա կողմից երթևեկությունը սկսելու վերաբերյալ
- 2.Կանգնելու մասին խնդրելու նշան
- 3.Ընդհանուր տազնապի ազդանշան

Պատ.՝1

Ի՞նչ ազդանշաններ պետք է տաք նշված հետագծով հետադարձը կատարելիս



- 1.Աջ
- 2.Ձախ
- 3.Նախ աջ, ապա ձախ:

Պատ.՝3

Եթե անմիջապես խաչմերուկից հետո մտադրվել եք կանգառ կատարել երթևեկության մասնակիցներին շփոթության մեջ չզցելու նպատակով, երբ պետք է միացնեք աջ շրջադարձի լուսային ցուցիչը



- 1.Նախապես մինչև խաչմերուկը
- 2.խաչմերուկ մուտք գործելու հետո

Պատ.՝2

Վազանցն ավարտող մեքենայի վարորդը ունի արդյո՞ք առավելություն համընթաց գոտի վերադասավորվելիս, տվյալ գոտով երթևեկող վարորդի նկատմամբ



- 1.Ոչ
- 2.Այո

Պատ.՝1

Մերձակա տարածքից դուրս եկող հատուկ ծայնային և լուսային ազդանշաններ միացրած վարորդին զիջել



- 1.Պարտավոր չեք
- 2.Պարտավոր եք

Պատ.՝2

Խաչմերուկն ուղիղ անցնելիս պարտավոր ենք արդյո՞ք զիջել ճանապարհը միացված դեղին առկայծող փարոսիկներով բեռնատարի վարորդին



1. Այո
2. Ոչ

Պատ.՝2

Չիջել ճանապարհը պարտավոր ենք



1. Մոտոցիկլի վարորդին
2. Հատուկ լուսային և ձայնային ազդանշաններ միացրած ավտոմոբիլի վարորդին
3. Երկու վարորդներին

Պատ.՝3

Չիջել ճանապարհը պարտավոր ենք



1. Երկու վարորդներին
2. Դեղին առկայծող փարոսիկով բեռնատարի վարորդին
3. Միայն ավտոբուսի վարորդին

Պատ.՝3

Այս իրադրությունում



1. Խաչմերուկը կանցնեք առաջինը
2. Պետք է զիջեք ճանապարհը ձախից մոտեցող վարորդին:

Պատ.՝2

Չիջել պարտավոր ենք



1. Բոլորին
2. Ոստիկանության ավտոմոբիլի վարորդին
3. Ոչ ոքի

Պատ.՝2

Ձախ շրջադարձ կատարելիս



1. Խաչմերուկն առաջինը կանցնեք
2. Կզիջեք միայն ոստիկանության ավտոմոբիլի վարորդին
3. Կզիջեք բոլոր վարորդներին

Պատ.՝3